ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թվականի N 53-Ն

ԸՍՏ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՇԱՐՔԻՆ ԴԱՍՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել ըստ գերատեսչական պատկանելության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված ցանկի 3-րդ սյունակում նշված մարմինների՝ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները տնօրինելու լիազորություն ունենալը ենթադրում է հաստատել գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետերի գրասենյակների), պետական գաղտնիքին առնչվելու համապատասխան ձևի թույլտվություն ունեցող անձանց թույլատրել ծանոթանալ պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին, գաղտնի

տեղեկությունները փոխանցել այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց, գաղտնագրել պետական գաղտնիքի շարքին դասման ենթակա տեղեկություն-ները, գաղտնազերծել իրենց կողմից գաղտնագրված տեղեկությունները, ըստ անհրաժեշտության, գաղտնազերծված տեղեկությունները հանձնել Հայաստանի Հանրապետության պետական արխիվի պահպանությանը, հրապարակման ուղարկել իրենց կողմից գաղտնազերծված իրավական ակտերը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» N 173 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ